Ի՞նչ է Սուրբ Զատիկը



Սուրբ Զատիկը Հիսուս Քրիստոսի մասին մտածելու հատուկ ժամանակ է:

Հիսուսը մահացավ խաչի վրա, որովհետև Նա սիրում է մեզ: Նրա մարմինը դրվեց գերեզմանում:

Սուրբ Զատկին մենք հիշում ենք, որ Հիսուսը գիտի, թե մենք ինչ ենք զգում: Նա զգացել է մեր ցավերն ու տխրությունը:

Երեք օր անց գերեզմանը դատարկ էր: Հիսուսը նորից ապրեց: Մենք դա անվանում ենք Հարություն:

Հիսուսի շնորհիվ մենք բոլորս կրկին կապրենք մահից հետո: Մենք կարող ենք սեր զգալ Երկնային Հոր և Հիսուսի կողմից ամեն օր, ոչ միայն Սուրբ Զատիկին: